ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)



Լրացավ հայ անվանի գիտնական, բանագետ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Սարգիս Հարությունյանի 75 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը:

Սարգիս Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին, Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: Մինչև հինգերորդ դասարանը սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1940 թ. տեղափոխվել է Թիֆլիս, ավարտել ուսումը տեղի հայկական դպրոցում: 1947թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժին, որն ավարտել է 1952 թ.:

1956 թ. ընդունվել է ՀԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրա, իսկ 1959 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «***Հայ ժողովրդական հանելուկներ***» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1971 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «***Մանուկ Աբեղյան, կյանքը և գործը***» թեմայով: 1972 թ. ընտրվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի վարիչի պաշտոնում և մինչ օրս ղեկավարում է այն, 1992 թվից՝ նույն ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1989 թ. ընտրվել է Ֆինլանդիայում հիմնադրված Միջազգային զրուցագիտական ընկերության անդամ:

Գիտության պամության մեջ Ս. Հարությունյանի կատարած դերի լավագույն ցուցանիշն այն բազմաբնույթ ու բազմաքանակ գիտական ժառանգությունն է, որի մեջ որքան խորանում ես, այնքան ավելի ես գիտակցում նրա վաստակի մեծությունը:

Չնայած հայ բանասիրության բնագավառում ունեցած մեծ ներդրմանը՝ նա ամենից առաջ ճանաչված բանագետ է, բանագիտական բազմաբնույթ խնդիրների խորահմուտ ու վարպետ հետազոտող: Նրա գրչին են պատկանում մեկ տասնյակից ավելի գրքեր ու մենագրություններ, 90-ից ավելի գիտական, 100-ից ավելի գիտահանրամատչելի հոդվածներ, հրապարակումներ, գիտաժողովների հիմնադրույթներ:

Ս. Հարությունյանն իր գիտական գործունեության սկզբնաշրջանն սկսեց տակավին չուսումնասիրված՝ հայ ժողովրդի հանելուկների հավաքման, համակարգման ու հետազոտման աշխատանքով: Նա համակողմանի ու նորովի լուսաբանեց հայ ժողովրդական հանելուկների ժանրային նկարագիրը, նրանց ինքնատիպ կառուցվածքն ու բնույթը, տաղաչափական կերպերը, կենցաղա-

վարման ձևերը, եղանակները, հայ և միջազգային բանագիտության մեջ հանելուկների գրառման, հրատարակման, արժեքավորման ողջ պատմությունը: Հայ բանագիտության պատմության մեջ Ս. Հարությունյանը ստեղծեց վիպական ժանրերի մասին ամբողջական ուսմունքներ: Հեռանկարային հարցադրումներով նա ձեռնամուխ եղավ հայ հմայական բանահյուսության տարբեր տեսակների՝ անեծքների, օրհնանքների, երդումների և հմայական աղոթքների հավաքման ու հետազոտման աշխատանքներին: 1975թ. հրատարակվել է նրա՝ «***Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ***» արժեքավոր մենագրությունը, ուր հեղինակը մշակութաբանական լայն հենքի վրա ստեղծել է մի ինքնատիպ ուսումնասիրություն՝ ժանրերի կիրառական ամենատարբեր դրսևորումներով: Նա քննում ու արժեքավորում է անեծք-օրհնանքների ժողովրդական հնագույն ըմբռնումներն ու կիրառությունները, բացահայտում նրանց տիպաբանության և բովանդակության էական հատկանիշները:

Իր ուսումնասիրություններում բացահայտելով բանավոր հորինվածքներում առկա ազգագրական նախաշերտերն ու դրանց ձևավորման հիմք հանդիսացող ժողովրդական հնագույն առասպելաբանական պատկերացումներն ու ընկալումները՝ հեղինակը տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բազմահարուստ տվյալների օգնությամբ, հայ առասպելաբանությունը դարձրեց մշակութաբանական նոր քննության առարկա: Նրա ջանքերի շնորհիվ հայ առասպելաբանությունը տակավին 1960-ական թվականներից է մտել գիտական շրջանառության դաշտ: Նրա հեղինակությամբ Մոսկվայում հրատարակվել է հայ առասպելաբանության մասին ռուսերեն հոդվածաշար („***Мифы народов мира***”, т. 1, 1980, т. 2, 1982, „***Мифологический словарь***”, 1990), որոնք թարգմանվել են գերմաներեն, հունգարերեն և այլ լեզուներով՝ հեղինակին բերելով միջազգային ճանաչում:

Նրա «***Հայ առասպելաբանություն***» արժեքավոր ու մեծածավալ մենագրությունն արժանացել է Համազգային կրթամշակութային հաստատության մրցանակի և 2000 թ. տպագրվել է Բեյրութում: Այստեղ նա քննության է ենթարկել հայ առասպելաբանական զրույցներն ու պատկերացումները, դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները ցեղակից և հարևան ժողովուրդների ավանդական մշակույթների համատեքստում:

Ս. Հարությունյանը խոշոր ներդրում ունի նաև հայ էպոսի՝ «***Սասնա ծռեր***» հերոսավեպի նոր տարբերակների գրառման, հրապարակման ու հետազոտման ուղղությամբ: Նրա ղեկավարությամբ Հայաստանի տարբեր շրջաններից գրառվել են հերոսավեպի 80-ի հասնող նոր պատումներ: Գիտնականը հրատարակել է «***Սասնա ծռեր***» պատումների երկու հատընտիր ժողովածու և «***Սասունցի Դավիթ***» համահավաք բնագիրը:

Հանրամատչելի եղանակով հայ հին ավանդական բանահյուսությունը ներկայացնելու նպատակով, Ս. Հարությունյանն ի մի է բերել և համակարգել Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Հովհան

Մամիկոնյանի երկերում առկա հայ հին առասպելներն ու վեպերը և հրատարակել «*Հայ հին վիպաշխարհ*» պատկերազարդ գրքում:

«*Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ*» արժեքավոր ուսումնասիրությամբ նա արձագանքել է վաղ հնդեվրոպական բանաստեղծական լեզվի, արվեստի, տաղաչափության ընդհանուր հատկանիշների վերակազմության և համեմատական ուսումնասիրության ուղղությամբ հնդեվրոպաբանների շրջանում տարվող աշխատանքներին և լուրջ դիտարկումներով իր նպաստը բերել հետագայում խնդրի առավել համակողմանի ու խորը քննությանը:

Ս. Հարությունյանը գիտական համակարգված մոտեցում է հանդես բերել նաև հայագիտության պատմության, մասնավորապես հայ մշակույթի ու գիտության երախտավորների կյանքի ու գործունեության ուսումնասիրման բնագավառում: Նրա գրչին են պատկանում Ստ. Մալխասյանցի, Գարեգին Սրվանձտյանցի, Գարեգին Հովսեփյանի, Գարեգին Լևոնյանի, Կարապետ Մելիք--Օհանջանյանի, Արամ Ղանալանյանի, Հովսեփ Օրբելու կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրությունները: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նրա հմտալից մենագրությունը՝ նվիրված դասական հայագիտության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկին՝ Մանուկ Աբեղյանին:

Հիրավի, Ս. Հարությունյանն իր ողջ գործունեությամբ ապացուցեց, որ արժանի է համարվելու Մանուկ Աբեղյանի հետնորդն ու նրա գործի շարունակողը: Գիտապատմական մեծ արժեք են ներկայացնում նրա երկու մենագրական ակնարկները՝ նվիրված V-VIII դարերի հայ գրականությանն ու ժողովրդական բանահյուսությանը՝ տպագրած «*Հայ ժողովրդի պատմության*□ 2-րդ հատորում (1894 թ.), 1870-1947 թթ. հայագիտության զարգացման պատմաշրջանի համակողմանի հետազոտությունը՝ «*Հայ ժողովրդի պատմության*» 6-րդ հատորում (1981 թ.):

Հայ և հարևան ժողովուրդների մշակութային փոխառնչակցություններին է նվիրված Ս. Հարությունյանի՝ «*Իրանական հոգևոր մշակույթի արտացոլումները հայ հին մշակույթի մեջ*» ուսումնասիրությունը: Նա անդրադարձել է նաև հայքրդական վիպական բանահյուսության առնչություններին: 2001 թ. լույս է տեսել Ս. Հարությունյանի «*Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը*» ուշագրավ աշխատությունը, որում համակողմանի ներկայացված է հայոց հնագույն հավատալիքների, կրոնաառասպելաբանական աստվածությունների և հետագա շրջանի կազմակերպված կրոնի ու դիցարանի պատմատիպաբանական զարգացման ընդհանուր պատկերը: Լայն մտահորիզոնով գիտնականի բազմակողմանի հետաքրքրությունների արգասիքն են նրա գրախոսականները, որոնք վերաբերում են հայագիտության ու հայ մշակույթի տարբեր բնագավառներին[1]: Ս. Հարությունյանի անմիջական ղեկավարությամբ, գիտական

[1] Տե՛ս *Ս. Հարությունյանի* կենսամատենագիտությունը, Ե., 2003, էջ 24-42:

նորագույն մեթոդներով և հաշվողական տեխնիկայի կիրառությամբ մշակվել և համակարգվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական հարուստ արխիվը, աշխատանքներ են տարվել նաև խաղիկների ամբողջ ժառանգության մոտիվային համաբարբառի ուղղությամբ:

Ս. Հարությունյանի գործունեության մեջ առանձնակի տեղ են գրավում նաև նրա խմբագրական աշխատանքները: Նա կազմել, խմբագրել, ծանոթագրել է Մ. Աբեղյանի երկերի ակադեմիական հրատարակության 7-րդ և մասամբ 8-րդ հատորները, Ա. Ղանալանյանի «*Դրվագներ հայ բանագիտության պատմության*» հատորյակը, իր ղեկավարած բաժնի աշխատակիցների մի շարք աշխատությունները[2]:

Ս. Հարությունյանը տասից ավելի ասպիրանտների և հայցվոր գիտաշխատողների գիտական ղեկավարն ու խորհրդատուն է եղել, և նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական մի շարք ատենախոսություններ, այժմ էլ շարունակում են մասնագիտանալ նոր կադրեր: Ս. Հարությունյանը մեծ վաստակ ունի նաև գիտամանկավարժական բնագավառում: Նա երկար տարիներ դասավանդում է Երևանի և Գավառի պետհամալսարաններում և Հր. Աճառյան համալսարանում:

2001թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Ս. Հարությունյանը հայագիտության ու հայ մշակույթի անխոնջ նվիրյալներից է: Պարույր Սևակի բնութագրմամբ. «***Ս.Հարությունյանը գիտության մարդ է, ինչ նյութական ու բարոյական վիճակում էլ լինի այդ գիտությունը՝ Ս.Հարությունյանը զբաղվելու է գիտությամբ, որովհետև դա նրա կոչումն է և ոչ թե ապրուստի միջոցը***»[3]:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս. Ա.
Բանասիրական գիտությունների թեկնածու

[2] Ամբողջական ցանկը տե՛ս ***Ս. Հարությունյանի*** կենսամատենագիտությունը, էջ 43-44:
[3] Տե՛ս ***Ս. Հարությունյանի*** անձնական արխիվ: